


թէ բոլորովին մոռացուել էին երբ տասնեւթյաց տար-  
ւով յառաջ, երբ Անդղիացիք յաղթութեամբ Քա-  
րու մտան, մի Անդղիացիք զօրապետ նշամարել էր Ս.  
Խաչի նշանն և եկեղեցին մանելով բաւական տեղե-  
կութիւն էր հաւաքել այդ եկեղեցւոյ և ժողովը ը-  
գեան մասին՝ զոր ժամանակին անդղիական թերթե-  
ռում հրատարակել տուեց.

3. ՀԱՐՄՍՈՒԹԻՒՆՔ.—Հնդկահայոց գաղթականութիւն կը սկսի նոր Զուղայու հաստատութեան յետ։ Երբ Շահ Արաս հայերին գերի տարած Պարսկաստան և Նրանց Ապահանայ մօտերին հաստատեց, Նրա մի նպատակն ևս այն էր որ հայերի պէս մի աչալուրջ և վաճառականութեան հմուտու աշխոյժ և աշխատասէր ժողովուրդ՝ իւր երկրի առևտուրն և արհեստներն զարգացնեւ։ և իրօք հայերն ևս այս նպատակին ծառայեցին, և քիչ միջոցում նոր Զուղայու Հայոց հարստութիւն առասպելական գարձաւ։ Բնչպէս վկայ են հյուակապ ապարանքներն և եկեղեցիք, բաղանիք, վանքեր ելն։ որ մինչև ցայժմ կանգուն կը մնան։ Հայք սկիզբն Աթղանստանի ու Բէլուչաստանի ճանապարհաւ Հնդկաստան մուտք գործեցին և իւրեանց զործունեութեան ասպարէզն մինչև հեռաւոր Եւրոպայի գլոխաւոր մայրաքաղաքներն, որպէս Աննետիկ, Ամստերդամ, Գենովա, Հռովմ ելն։ տարածեցին և ամէն տեղ մեծ անուն ու համբաւ ստացան իւրեանց հըմտութեան և աշխատասիրութեան համար։ Աննետիկոյ Ա. Մարկոսի հրապարակի մէջ գոհարեղէն վաճառելու իրաւունքն միմիայն Հնդկահայ վաճառականներին շնորհուած էր, մինչդեռ այդ հռչակաւոր հրապարակի վերայ որ և է առևտուր ի սկզբանէ անտիխոսիւ արգելուած էր։ Մինչև ցայսօր Ա. Մարկոսի եկեղեցւոյ գաւթիւ սիւների վրայ բազմաթիւ Զուղայի և Հնդկաստանցի հայ վաճառականաց անուներ փորագրուած կը տեսնուին։ Ամէն տեղ ուր որ գաղթել են Հնդկահայք՝ իւրեանց ազգասիրութիւն և եկեղեցափութիւն ցոյց տուած են՝ եկեղեցի, տպագրատուն և ուր կարելի էր՝ գպրոց հաստատելով։

Եսկ Հեղակաստանի մէջ մինչև Ներկայ գարու սկիզբ-  
ներին հայ վաճառականներն առաջին տեղն ունեին,  
այնպէս որ Ընդլիիկան կառավարութիւն որ սկսած  
էր արգելն իւր ազգեցութիւն և իշխանութիւն Հընդ-  
կաստանի վրայ ամրապնդել՝ պարտաւորուեցա. Հընդ-  
կահայոց այս բարձր զիբին ճանաչել՝ տալով նորանց  
արքունի հրովարտակաւ Զինաստանի մետաքսելինաց  
մենաշնորհն, և քաղաքական գէպքերում հայերին  
իրեւ եւրոպացի ճանաչելով եւրոպական իրաւունք-  
ներ տալով նորանց զորս մինչև ցայսօր վայելում են

Սակայն Հնդկաստանի արդի գրութիւն մի ցաւալի հակապատկեր է ներկայացնում՝ անցելոյն հետ բաղդատելով, և ին Հնդկահայ մեծահարուստ վաճառականաց զաւակունք և թոռունք այժմ ըստ մեծի մասին կամ չքաւորութեան մէջ են կամ իւրեանց պապերից մնացած ժառանգութիւնն առանց արդիւնաւորելու՝ մսիում են, Հնդրից միայն Արգարեանց ընկերութիւնն է որ կարողացի է իւր գործն շարունակել մինչև ցայսօր, սակայն յիսուն վաթուն տարուայ ընթացքում մի այնպիսի զգալի յառաջադիմութիւն չի արել, այլ միայն այդ տան հին անուն և պատիւ կարդղացել է մինչ ցարդ պահպանել, Այնպիսի առևտրական ընկերութիւնք որ յիսուն վաթուն տարուով յառաջ Արգարեանց հետ որ և է կերպիւ բաղդատուելու արժանիքն և համարձակութիւնն չունէին, այժմ շատ աւելի բարձր և ճոխ գրութեան մէջ են, իսկ մնացեալ հին մեծատունների ներկայացուցիչք՝ մի քանի անշան առևտրականք և արհեստաւորք են, որը հաղին հազ կարողանում են իւրեանց շռաւչ ծախուելոն հանել, Արգարեւ մի նոր սերունդ ևս կայ Հնդկաստանում՝ մեծաւ մասամբ Զուղայուց յետին ժամանակներ գաղթեաններ, որը փոքր ի շատէ առևտուրի և ուրիշ գործերում երեւում են, բայց այլազդեաց բաղդատմամբ որ և է կանորութիւն չունին. Նորանց ծախսելն օտարազգի մեծատանց հաւասար է, այլ արդիւնքն սորանցից յոյժ պակաս:

ՀԱՅ ՀԵՐԵՎԱՆԻ ՏԵՍԱԿԱՆ



Digitized by srujanika@gmail.com

( Եարունակութիւն )

— Անքան տեսայ օր Կիրոն ասկրին մէց է. ցորս  
դին պատի պէս պատաճ է. — Օվանէս, ըսրց, ինց կի-  
նէս, ինձի ապոռթ կիւլէ հասուր:

Օվանեսը գնըց ու մեր աղան ձինը հեծեր, փախեր է, տեսայ օր Արքոն թուրը ցլպղցոց, թուրը փառլամիս էղաւ, ևս էալ ըս դիուն քասեցի, թուրը փառլամիս էրի—օ, Արքո, մի վախիք, Ընկատը հաես օ ցորս սոււրով (ձիաւորով) տալիս հեծած, ամեքուն թուր մի նետեցի, ցորս ձին էալ պարկեցուցի, մէկ մարդուն էալ զլոնիք կը յրեցի, տեսայ օր փասան կըսէ. —Հա պապամ օլասզ Հա (տեսնամ զձեզ, սիրելի Հայր լինեք): Ցի զիտէր օ ես իմ ընի գիտէ թէ թուրբեր Դամբէրն է բանած, ցըսեր թէ հինգ հօգի թրես ընցուցեր իմ: անքան տեսայ օ Օվանեսը կիւլէն հասոց, բարց. —Մի վախիք

աղբատանք. գու մըսէր, թապուր մի ասկրին կէսն և մնացեր, մեր աղան էալ էլեր թամասա կինչեր, իր կուն գդիք քառսուն օսկի տուեց, ի՞նց ինիք.

Ամեն երկիր որպէս միամտութեան և խորագիտութեան զրուցներ յօրինած և վերագրած է իւր շրջակայ ժաղովրդեան միջն վերայ, այնպէս ևս Զարսանճագին խորագիտութեան առակներն կը յատիկացնէ Փերինցուն և միամտութեան առակն Միւրաքցոյն:

Իր Միւրաքցին ասած է. — Քիզի օր ըսիմ. մենք պահը էկաւ, մի ծոթը գարուն էր, մի ծոթը առուն էր, ըս տարի էկաւ, էրնս ցի տուաք, գնոց, էալ ցեկաւ.

Միւրաքցիք, որպէս ասացի, եկեղեցի չունին, իրենք արգէն տարածուած են Գէրսիմի մէջ, չեռաւոր գիւղերէ քահանաներ կը դնան նոցա եկեղեցական արարողութիւնը կատարելու համար. Միւրաքցիներն մին որպէս թէ Զարսանճագ եկած պատարագ տեսած է, սա կերթայ իւր աղքակցաց կը պատմէ. — Էան խոր հաեա օր կրծկին կելլին, իրարու փեծ (ուս) կը խածնեն. վախեցայ իմ փեծ խածնեն փէտա առայ, փախայ:

Մի այլ Միւրաքի կասէ.

— Յէ ըդոր պատառում պատարագ կըսին. ըս մօրուքը իրիք չեղ է տեսեր, քահանայ մի կերթայ Փախ, ճանապարհին վերայ մի Միւրաքի կը պատահի, որ գաւարը կարածէր. — Տէր Բարայ, ուր կերթը, կասէ.

— Զատիկ է, կերթը, սրբութին տի տամ կըսէ.

— Յէ, տէրտէր, կայնի, բան տի ըսիմ, օր գըցիր մեր տուելը, մեր տղին սրբութին տուր, օր ես ցդամնը, կը լնըս ցանազը, գոցիկ գդալը կը ցգիս մէցը, ևս իրիկունը կուգամ կուտիմ:

Թորիկ բարարին կրիան ցոյց տուին, ու ասացին. — ըսի ի՞նչ է, — ըսի սուրբ է, ասաց Թորիկ բարար. բերէք վրան մոմ շարինք:

Կրիայի կօշին (պատեան) մոմ կը շարեն, կրիան կը վասի, փախնի մարագը կը մտնի, մարագը կը վասի. — Ծոփ ի՞նչ է հարցուցին Թորիկ բարարին, — Լու է էչեր, ասաց. արէք ժամ շինենք,

Քուրդ բէկիր որոշած են Միւրաքցոց գողութեան առաջն առնելու համար իւրաքանչիւրն մի մի Միւրաքի վարձել, գող Միւրաքցին զիտէ որ այս ինչ աղայի մօտ ուրիշ Միւրաքի կայ, չհամարձակիր նորա մի ապրանքը դողանալ, երկիւղ կրելով ապագայ թշնամութենէն, որ այլ ևս ներել չկայ, Ղամբէր Փախայ Կուլապի աղային մօտ կը լինէր, աղան Ղամբէր կը յշէ մի այլ աղայի ձին գողա-

նալ գիշերն կերթայ, կը հանէ. նոյն աղան կիմանայ որ ձին Ղամբէր տարած է, չետևեալ տարին նոյն աղան կը վարձէ զՂամբէր. կառաջարէկ որ իւր ձին ետ գարձնէ. — Ղզայ, կատէ, այժմ քու հացը կուտեմ պէտք չէ որ անհաւատարիմ գանութիմ: Զին գողանալու անցը Ղամբէր պատմած է. — քիդի որ սիմ, էլայ գացի, գեղ մտայ, սիտին (շներ) պաշայեցին զօս ինիլը, աղան պոռաց «Հատար կեցէր» ես ուսուլով պատմի սուարը նստայ, սրմին թափուան զիտուս վրայ, զէսի էրկինը հաեա, սանը ասդ էլեր էր, սան աղօմթքը ըսի, սրմին գդին ինքիր տեղը պարկան, զցի տեսայ ճրագը կը վասի, աղան էալ ցողոի կր խմէ, ես էալ մի գալտա տեղ քոյզու վեար առի ցախմախ զարկի քոյզու մէց, ցպսի մի քասեցի, Մինա աղրօր օր ըսիմ, էլայ, գոմու զուռ տասուերկու բալիի ունի, բացի, ներս մտայ. հերիփը ոտքը էրկինցուցած էր դոան էսիկին հետ, թուռը ցլպիցուցի, քրդու օտքը գէն քսեցի. քեզի օր ըսիմ, օր արթընար թուռը տի զինէի, ձիու օտացը առկ քիչէ կապեցի, քասեցի գուրս. Կիրօն հեծուցի, ևս ձի հեծնալ ցիմ զիտէր. — Կիրօն, բսի, քեզի տեսնըմ իմտար գալտի սանա (օդնութիւնը քեղ մնաց), Քուրդը արթուն է էղեր, զիտէ ևս Ղամբէրն իմ, վախուն ձէսն չէ տուեր, օր էլայ գուռու, պօսաց — ձին տարին, էլան գուռը խառնուան իրուր էնիւկով ծիւծիւկով տնամի մարդով. հաեա աղան էլաւ, հա բանեցէք, հա, վեզօ էկաւ, քեզի օր ըսիմ, լոեց Ղամբէրն է տանողը, յետիս ցեկան հաեա աղան առեր խզմէթքրելը էկաւ, քովուս ընցաւ, գիշեր էր, ընցան, ինձիս ցի տեսան, ևս էլայ ուսի ծափի վրայ, էնոք զցին ու ետ գարձան, ծափի տակ էկան թոփուան, տեսայ աղան կրսէ — ձեզիպէս քառսուն օր թէ պէյիմ, մէկ Ղամբէր կը պէյիմ: Էնոք զցին, էլայ օր էրկու հոգի հօնի կայուուկ էին, մի թուր զարկի, տեսայ օր լըխ լըխ լըկան:

1870 Թուականներուն Խարբերդու վիճակին մէջ մէծ հոչակ հանեց Ղայա անուն մի Ղզլաչ, նա չորս անձով և շատ անգամ առանձին սարսափելի աւազակութիւններ կանէր, նա մինչև Սամսոն իւր ասպարէզը տարածեց. ինքը Թէղըկանու էր, Թլից, Գառնիկերտից մինչև անգամ Խարբերդից սկսաւ տուրը առնել, կառավարութեան պաշտոննեաններն անգամ սարսափի մէջ ձգեց, մեր Ղամբարի ազգական Փահանա ալին որ մահմեդական գարձած էր, նա ևս մի զիւղից (Պիչերու) տուրը կառներ, Ղայան սորս ձեռքից կը լոլէ այդ տուրըն, Փահմետ լին թէկ թուրբացած՝ սակայն Միւրաքի լինելով Ղամբարի տղան կիրօն կը պնդէ Ղայային ետևից որ սպանէ իւր աղգականը անպատուելուն

Համար, Վայան Արքոյի երկիւղից այլևս չկարողացաւ Խարբերդու սահմաններու մէջ երևան գալ:

Միլիարդիք Զարսանճաղի բէկերուն ևս օգնած են, որոնց տասն և հինգ հազար բանակին դիմադրած են Հնարքով և փախուցած. Խօմայէլ և Նէջիպ բէկերն միմեանց հետ գժտեցան, Խօմայէլ 5000 պատերազմող հաւաքած էր, տասն հազար ևս կառավարութեան կողմից օդնութիւն եկած էր, Նէջիպ սորս գէմ 5000 պատերազմող ունէր, պատերազմի համար փարձած էր Միլիարդի հայ Պատարին իւր եղայրիներով:

Ն.յն երեկոյին Պամպար Քաղնիք գիւղն Նեցիպ բէկի տունն երր կը հասնի, Հետեւեալ գիշերին պատերազմն պիտի սկսէր, Աւճիպ ցոյց կտայ Պամպարին մի թռչուն, կը հրամայէ որ Հրացանով զարնէ, — Նգուլին (կտուց) տի զիմիմ ասելով՝ Հրացանը կարձակէ. կը զարնէ, բէկն ուրախանալով մի ոսկի կը տայ, մի ոչ խար ևս կը մորթէ, սորա վերայ կը նախահածեն 5000 պատերազմովք — Պամպար թօղ գնայ պատերազմի, կասեն, Աւճիպ կը յօւսահատի Պամպար իւր հինդ ընկերներից գիւղի եղբեն յարմար քարերը զետնի մէջ գերեզմաններ կը փորէ, հինգ անձ ևս օգնական կը դանէ, բէկն ձեռքը ծոցը դրած Պամպարի մօտ կը գայ, — Պու մի վասիք, բէկ կասէ, էգուց զու թամասա կենսիս, պիթուն թրես տի անցնիմ իմ թուրս կէծակի կտոր է. 100 ոսկի տուեցին, զիմ տուեր:

Ղամզպար իւր չորս եղբայրներով և մի որդի-  
ով արած քաջութիւնն կը պատմէ. —Ելաք հինգո  
էալ, ես, Օվանէսը, Մինասը, Ակորը ու մեր Կիրօն,  
գեղի ցորս զին սածայադի կանաք. Օվանէսին  
ըսի, —ոռու կը, յրիձիս, ինց ինմ օ խղճով իս. Էաս  
գողութիւն ցէ, զարկ, մի հայր, գիւնըը լուսնալու  
էրկու սահամ կար, Օվանէսը ծամինձի, փեղաս  
մի առաւ էկաւ. մէկ մէկ գերեզմանի պէս փորեցաք,  
բէկը ձեռքը ծոցը էկաւ, հաեւաւ օ խղճէթ քրերը  
էկած ցէ, վայ—վայ, ըրըց, չէմալ ձիանու նախ  
ձեանը էկաւ, սախ—սախ—սախ—սախ, տասնը հինգ  
հազար մարդ թոփուան, օ տի ծաղկուին գելը  
մննան, տեսայ Բասունայ Մահմու աղան էկաւ,  
դիխուս վերդին կայնաւ, պարկայ օ, ինձիս ցի տես-  
նայ. թուրս կամաց կամաց քասեցի տեսայ օ Իս-  
մայիլ բէկն ըսրց, —սարուեցէք գեղին ցորս գին,  
Մահմու աղան քսեց օ ընծի, սեխմանին թեթի-  
կը թօսանմոս էղայ, կիւլլէն գցեր, անցեր Խսմա-  
յիլ բէկին ծիուն դպիր էք, Էն խտի հաեւա Օվա-  
նէսի սեխմանի ձեանը էկաւ, մեր Կիրօն (իւր տղան)  
թուրը քրպացցեցի հա կը զինէ. մի սահամ քսե-  
ցաք, համիզ, լուսաւ, թափեցաք կարմիր Վանուց  
ցորց, հայեաք յետենիս մարդ զիա, կանցեցի—Օ-  
վանես, քը տեսնամ, կըտրիթուման օրն է, ա կէօ-  
ղինէ տէօնտիւկիմ, տեսայ օ Օվանես թուրը ցլպրդ-  
ցոց, զարկաւ գլուխը կը, յրեց ես էալ վէարդին կը՝  
րեցի, տղաքն էալ թմակն ապաշխացին զինիլ. Զար-  
գեցաք, պարութը կիւլլէն թմաւ, —Կիրօ, ինց կի-  
նիս, հասիր էկոյ տես որ օրուան մեր վրայ, ինչոց  
տի ինչիք. Բէկն էալ էկաւ տեսաւ օ հանիրիք քսոի-  
տէրին զլուխոր) —հա բարաց զլարզ, ըսրց, նէ-  
ճիպ բէկ ամեն տարի Վամզպարի հացն կը տար, մին-  
չև որ Փերին զայմախամ նստաւ, յորմէ յետոյ  
չտուեց.

## ԿԸ Հարու՛նակու

## Ս. Հայկունի.

Բ 9 Գ Ա Յ Ի Ւ

Քաշանայութեան վեհ կոչումն երկու  
մեծ պարտականութիւնների հետ է կապուած,  
մին՝ զուտ կրօնական - քարոյական եւ միաը՝  
դաստիարակչական, առաջին պարտականու-  
թեան մասին խօսքը մի այլ անգամի թողնե-  
լով այսօր հարկն ու ժամանակի հանգամանք-  
ները ստիպում են մեզ երկրորդի մասին խօ-  
սելու և մեր հոգեւոր հովիւներին մի յորդոր  
կարգավոր:

Քահանայի վիհագոյն տիպարը՝ մարդկութեան դրկիշը և նրա անմիջական աշակերտները ջաների պէս լուսաւորում են դժուարին պաշտաման ուղին. քահանայք կարիք չունին վերացական հրամանների և հրահանգներին, նըրանք պիտի հետեւեն իրենց նախատիպարի և նրա աշակերտաների օրինակին: Ենթանի օրինակից աւելի լաւ ուսուցիչ չկայ. մինչ խրաներով ուսուցման ձանապարհն երկար և ամենի համար անցանելի չէ, օրինակով ուսանելու ձանապարհը կարճ է և արգաւառու:

Մեր Փրկիչն ուսուցանում էր իւր կեան-  
քով եւ խօսքով, նոյնը պատուիրեց Նա իւր  
աշակերտներին: «Գնացէք և ուսուցէք». Նա և  
Նրա աշակերտները կատարեցին այդ այնպիսի  
յաջողութեամբ, որով մինչև այն ժամանակ  
ոչ մի փարզապես և փիլիսոփայ չէր ուսուցել  
և ոչ մի մանկավարժ ցարդ չէ կարողացել ու-  
սուցանել:

ի՞նչքան խրատականն է մեզ համար սըր-  
բազան առաքեալների կեանքը. ի՞նչքան շատ  
բան կարող ենք մենք ուսանել նրանց առաքե-  
լութիւնից: Այդ տգետ և խոճուկ վարդա-  
պետները իրենց աշակերտ դարձրին այն ժա-  
մանակուան ամբողջ աշխարհը՝ տգետ, խեղճ,  
ապակինութեան մէջ թաղուած հրեայ, առո-  
րի, հար պարսիկ, եղիպատացի, հնգիկ ժողո-  
վրդից սկսած մինչև փարթամ և զիտութիւն-  
ներով պարծեցող յոյնին և հռովմէացուն.  
ստրուկին, աղատագրեալնեն, պատրիկին և կայ-  
սերական տան զաւակիներին: Եւ ի՞նչպիսի հաս-  
տատուն, անսասան և ամենայն ինչ բովան-  
դակող ուսուցումն էր այդ, որի դրած հիմունքը  
ոչ ոք չէր կարողանում քանդել: Ապացոյցների  
կարիք չկայդրանցից վեհագոյնը այն անհա-  
մար նահատակութիւններն են, որոնցով պար-  
ծենում է այսօր եկեղեցին: